



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՎԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



«ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱ»Ի ՅԱՏՈՒԿ ԱՂՕԹՔ՝ ԻՐԱՆԵԱՆ ՕՂԱՆԱԻ ԱՐԿԱԾԻ ՉՈՅԵՐՈՒՆ ՀԱՍԱՐ

Չորեքշաբթի, 15 Յուլիս առաւօտուն, Թեհրանէն դեպի Երեւան թռիչքի պահուն, իրանեան օդանաւ մը արկածահար եղաւ. զոհ գացին ճամբորդներն ու օդանաւին անձնակազմը, որոնց շարքին էին 40 հայեր: Չոհերու շարքին էր նաեւ Թեհրանի հայ համայնքի վաստակաշատ ծառայողներէն ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տոքթ. Լեւոն Դաւթեան:

Այս տխուր առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան հաղորդակցութեան մէջ մտաւ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հետ ու յանուն Թեմիս ժողովականութեան ու անձնապէս, ցաւակցութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին ու Ազգ. Կեդրոնական Վարչութեան:

Առաջնորդ Սրբազանը նաեւ գիր մը յղեց Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեանի, ցաւակցութիւն ու վշտակցութիւն յայտնելով Թեմի ժողովականութեան ու զոհերու ընտանեկան պարագաներուն:

Առաջնորդ Սրբազանին տնօրինումով, Կիրակի, 19 Յուլիսին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ «Տեր Ողորմեա»ի յատուկ աղօթք պիտի բարձրացուի առ Աստուած, որպէսզի յաւիտեանական հանգիստ պարգեւէ զոհերու հոգիներուն ու անոնց ընտանեկան պարագաներուն շնորհէ Ս. Հոգւոյ մխիթարութիւնը:

Ծանօթ է, որ նոյն օրը Յիսուս Զրիստոսի Այլակերպութեան տօնին առիթով, Առաջնորդ Սրբազանը անդրանիկ Ս. Պատարագը պիտի մատուցանէ Նորթ Հոլիվուտի նորակազմ համայնքի մեր եկեղեցւոյ մէջ, ուր նաեւ օդանաւի զոհերու յիշատակին «Տեր Ողորմեա»ի յատուկ աղօթք պիտի կատարուի:

Նշենք նաեւ, որ յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Արժ. Տ. Արտակ Թինյ. Տեմիրճեան Ուրբաթ, 17 Յուլիսի երեկոյեան այցելեց Հայաստանի հիւպատոսարանը եւ ցաւակցութիւն արտայայտեց զոհերուն համար:

SPECIAL PRAYERS IN ALL PRELACY CHURCHES FOR THE VICTIMS OF THE IRAN PLANE CRASH

By the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, during Divine Liturgy on Sunday, July 19th, special prayers will be offered in all Prelacy churches for the victims of the plane crash in Iran. Among the victims were forty Armenians including former member of Iranian Parliament, Chairman of Tehran's Diocesan Council, and a member of the Central Executive Council of the Great House of Cilicia, Dr. Levon Davtian.

The Prelate expressed his condolences to H.H. Catholicos Aram I and the Central Executive Council, and sent a letter of condolence to H.E. Archbishop Sebouh Sarkissian, Prelate of the Tehran Diocese.

As previously reported, on this day, the Feast of the Transfiguration, the Prelate will pay his first official visit to the recently established North Hollywood parish where he will celebrate Divine Liturgy and deliver the sermon. The Prelate will also preside over the special prayer service for the crash victims.

On the afternoon of Friday, July 17th, Rev. Fr. Ardak Demirjian paid a visit to the Consulate of Armenia to convey condolences on behalf of the Prelate and Councils.

ԱՐԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ 26 ՅՈՒԼԻՍԻՆ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ ՔՐԵՏԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՁ

Յառաջիկայ Կիրակի, 26 Յուլիսին, Քրետենթա Հովիտի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հիմնադրութեան 3-րդ տարեդարձին առիթով, Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի Unity Church of the Valley եկեղեցւոյ մէջ, Լա Քրետենթա, Կ.Ե. ժամը 1-ին:

Պիտի Պատարագէ եւ պիտի քարոզէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Ս. Խորանին պիտի սպասարկէ եկեղեցւոյ հոգեւոր մատակարար՝ Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան:

EPISCOPAL DIVINE LITURGY ON THE THIRD ANNIVERSARY OF THE CRESCENTA VALLEY PARISH

On Sunday, July 26th, 2009, the Armenian Apostolic Church of Crescenta Valley will celebrate its third anniversary. On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at the parish, which holds its services at Unity Church of the Valley. The service begins at 1:00 p.m.

Parish pastor Rev. Fr. Ardak Demirjian will assist at the altar.

ՅՈՒՐՏ. Տ. ՎԱՂԻՆԱԿ ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ ԿԸ ՍԿՍԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՅ ԻՐ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ու Յոզ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան, Յինգշաբթի, 16 Յուլիսին, Սան Ֆրանսիսքո մեկնեցան եւ երեկոյեան հանդիպում մը ունեցան Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւին, Երեսփոխանական կազմին եւ Յոգաբարձութեան հետ: Եւրոյն նպատակով Սան Ֆրանսիսքո մեկնեցաւ նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան: Այցելութեան նպատակն էր Յայր Վաղինակը ծանօթացնել ծխական համայնքի ժողովականութեան:

Յայտնենք, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի տնօրինումով եւ Առաջնորդ Սրբազան Յօր ու Ազգ. Իշխանութեան փափաքին վրայ, Արեւմտեան Թեմ ծառայութեան առաքուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան անդամներէն Յոզ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան: Յայր Սուրբը հոգեւոր հովիւին հետ միասին որոշ ժամանակ մը պիտի ծառայէ Սան Ֆրանսիսքոյի ծխական համայնքին:

Յայր Սուրբը անդրանիկ Ս. Պատարագը պիտի մատուցանէ Կիրակի, 26 Յուլիսին:

VERY REV. FR. VAGHINAG MELOIAN BEGINS HIS SERVICE AT ST. GREGORY CHURCH IN SAN FRANCISCO

On Thursday, July 16th, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Very Rev. Fr. Vaghinag Meloian departed for San Francisco where Fr. Vaghinag will soon begin his service alongside parish pastor Rev. Fr. Avedis Torossian. Executive Council Chair Dr. Garo Agopian also traveled to San Francisco to participate in the introductory meeting with the Pastor, Delegates, and Board of Trustees of St. Gregory Church.

Very Rev. Fr. Vaghinag Meloian will celebrate his first Divine Liturgy at St. Gregory Church on Sunday, July 26th.

«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՏԱՐՈՒԱՆ» ԱՌԻԹՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋ-ԹԵՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Յառաջիկայ շաբաթավերջին, Երիտասարդական եռօրեայ համագումար մը տեղի պիտի ունենայ Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ: Այս համագումարը մաս կը կազմէ «Երիտասարդութեան Տարուան» առիթով նախատեսուած նախաձեռնութիւններուն:

Եռօրեայ համագումարին պիտի մասնակցին Արեւմտեան եւ Արեւելեան Թեմերու Երիտասարդական միութիւններու անդամներ:

Համագումարը պիտի սկսի Ուրբաթ, 24 Յուլիսի առաւօտուն, յատուկ արարողութեամբ եւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի օրհնութեան աղօթքով ու պատգամով:

Համագումարը պիտի ընդգրկէ ժամերգութիւններ, Ս. Գրային խորհրդածութիւններ, դասախօսութիւններ, կլոր սեղանի շուրջ հարցերու քննարկում, վկայութիւններ եւ աղօթքի պահեր: Աւարտին, ներկաները առիթ պիտի ունենան այցելելու San Juan Capistrano-ի դարաւոր վանքը:

Համագումարին մասնակցիլ փափաքող երիտասարդներ կրնան կապ հաստատել Ազգ. Առաջնորդարանին հետ եւ ստանալ լրացուցիչ հարցաթղթիկները:

ACYA “SPIRITUAL GROWTH” SUMMER CONFERENCE

The central board of the Armenian Church Youth Association has organized a three day “Spiritual Growth” summer conference to take place at the Prelacy “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall from Friday, July 24th, 2009 to Sunday, July 26th under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Youth from the Western and Eastern United States will participate in the conference which is among the activities planned this year in observance of the “Year of the Youth”.

The conference will be comprised of morning and evening prayers, Bible study, lectures, round table discussions, fellowship and social hour, and a trip to the San Juan Capistrano Mission.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄ ՄԸ ՊԻՏԻ ՏԱՅ ԴԱԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԹԵԼԵԹՈՆԻՆ

Երկրորդ տարին ըլլալով, Կիրակի, 19 Յուլիսի երեկոյեան ժամը 6-էն մինչեւ 12-ը, Հորիզոնի 285-րդ եւ AABC TV 284 ալիքներէն պիտի սփռուի Դաւթեան Մարիամեան Կրթական Հաստատութեան տարեկան հանգանակային թելեթոնը:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան անձամբ ներկայ պիտի ըլլայ թելեթոնին, պիտի փոխանցէ իր պատգամը եւ օրհնութեան խօսքը:

SECOND ANNUAL DAVIDIAN & MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION TELETHON

On Sunday, July 19th, 2009, the second annual Davidian and Mariamian Educational Foundation Telethon will be broadcast on Horizon and AABC TV channel 284, from 6:00 p.m. to midnight.

The Prelate will be present at the Telethon to convey his message and blessings.

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎԻՆ

Հինգշաբթի, 16 Յուլիսի երեկոյեան, գումարուեցաւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Խնամակալ Մարմինի հերթական ժողովը, Հիմնարկութեան գրասենեակին մէջ, Կլենտէյլ: Օրակարգի վրայ էին, այժմեական հարցերու մշակումն ու ապագայ ծրագիրներու քննարկումը: Ժողովին ներկայ էր Ազգային Վարչութեան անդամ եւ Հիմնարկութեան մօտ Ազգային Առաջնորդարանի ներկայացուցիչ՝ Տիար Սիւր Տէր Յովաննէտեան:

PRELATE REPRESENTED AT ARMENIA FUND CORPORATE BOARD MEETING

On the evening of Thursday, July 16th, 2009, the corporate board meeting of Armenia Fund took place at the organization's headquarters in Glendale. During the meeting current activities were discussed and analyzed and future endeavors were drafted.

Executive Council member and Prelacy representative to Armenia Fund Mr. Meher Der Ohanessian participated in the meeting.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԴԱՏԱԴՈՐ ՍԱՍՈՒԷԼ ՏԵՐ ԵՂԻԱՅԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան



Չորեքշաբթի, 15 Յուլիսի առաւօտուն, Ազգ. առաջնորդարանին մէջ ընդունեց Սիացեալ Նահանգներու Դաշնակցային Դատաւոր Սամուէլ Տէր Եղիայեանի այցելութիւնը: Դատաւոր Տէր Եղիայեան կարճատեւ այցելութեան մը համար Լոս Անճելըս կը գտնուի: Ատոր կ'ընկերանար եղբայրը՝ «Մաշտոց» Զուլէճի տնօրէն Տոքթ. Կարպիս Տէր Եղիայեան:

Հանդիպումին, խորհրդակցութեան սիւթ եղան այժմեական հարցեր, որոնք ընդհանրապէս աղերս ունին հիւր դատաւորին ասպարեզին հետ:

Առաջնորդ Սրբազանը այս առիթով գոհունակութիւն արտայայտեց, որ Դատաւոր Տէր Եղիայեան մէկն էր այն քառասուն անձերէն, որոնք յատուկ պատիւի արժանացած էին «Նիւ Եորք Թայմզ»ին կողմէ, 4 Յուլիսին, անկախութեան տօնին առիթով հրատարակուած յօդուածի մը մէջ, անձնաւորութիւններ՝ որոնք Միացեալ Նահանգներ ներգաղթելով, հասած են պատուաւոր դիրքերու:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը յուշանուէր մը յանձնեց յարգելի հիւրին:

Նոյն օրը, Չորեքշաբթի, 15 Յուլիսի երեկոյեան, հիւրընկալութեամբ Կլենտէլլաքնակ Տէր եւ Տիկին Օննիկ Մեհրապեաններու, ի պատիւ դատաւոր Սամուէլ Տէր Եղիայեանի, ընդունելութիւն մը տեղի ունեցաւ: Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան ներկայ եղաւ ընդունելութեան եւ փոխանցեց Սրբազան Հօր օրհնութեան խօսքը:

JUDGE SAMUEL DER-YEGHIAYAN VISITS THE PRELACY

On the morning of Wednesday, July 15th, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed the visit of United States District Judge the Honorable Samuel Der-Yeghiayan to the Prelacy. Judge Der-Yeghiayan was accompanied by his brother and Mashdots College president Dr. Garbis Der-Yeghiayan.



The Prelate and guests discussed a number of issues and on this occasion the Prelate congratulated Judge Der-Yeghiayan on being one of forty individuals recently honored by the New York Times in an article written on immigrants who have achieved great success in the United States.

At the conclusion of their meeting the Prelate presented Judge Der-Yeghiayan with a memento.

In the evening, a reception in honor of Judge Der-Yeghiayan took place at the residence of Mr. and Mrs. Onnik Mehrabian. H.E. Archbishop Yeprem Tabakian attended and conveyed the Prelate's blessings.

**ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՕՐՅՆԷՔ ԱԶԳԱՅԻՆ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «Ս. ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԱՇԽԷՆ» ՄԱՏՐԱՆ
ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻ**

- **ՏԻԿԻՆ ԱՇԽԷՆ ՓԻԼԱԴԵԱՆ 15,000 ՏՈԼԱՐԻ ՆՈՐ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ
ՄԸ ԿԱՏԱՐԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ**

Հայաստան աշխարհի առաջին քրիստոնեայ թագաւոր ու թագուհի՝ Ս. Տրդատի եւ Ս. Աշխէնի տօնին առիթով, որ միաժամանակ Ազգ. Առաջնորդարանի մատրան անուանակոչութեան տօնն է, Շաբաթ, 11 Յուլիսին, երեկոյեան ժամը 6-ին, Ս. Պատարագ մատուցուեցաւ եւ մատաղօրհնէք կատարուեցաւ Առաջնորդարանի մատրան մէջ:



Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցանեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

Ս. խորանին սպասարկեցին Հոգ2. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան եւ Հոգ2. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեցին Ազգ.

Առաջնորդարանի «Լուսաւորիչ» երիտասարդաց երգչախումբի անդամները:

Ս. Պատարագին ներկայ էին Հոգեւորականաց Դասու անդամներ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Ազգային Վարչութեան ու ժողովականութեան ներկայացուցիչներ, մատրան բարերարուհին՝ Տիկին Աշխէն Փիլաւճեան, Ազգային Առաջնորդարանի բարերարներ, ինչպէս նաեւ բազմաթիւ հաւատացեալներ:

Մատրան մայր դուռը վերջերս գեղազարդուեցաւ խաչքարի պատկերով ապակեայ արուեստի գործով մը, ի յիշատակ Չապել Պասմաճեանի: Առ այդ, Ս. Պատարագէն անմիջապէս առաջ տեղի ունեցաւ գեղանկարի օժման արարողութիւնը, ի ներկայութեան բարերար ընտանիքին:

Ս. Պատարագի ավարտին, Առաջնորդ Սրբազանն ու հոգեւորականաց դասը ուղղուեցան սրահ, ուր տեղի ունեցաւ մատաղի օրհնութիւն:

Իր քարոզին սկզբնաւորութեան, Առաջնորդ Սրբազանը ողջունեց ներկայութիւնը յարգելի հիւրերուն ու հաւատացեալներու բազմութեան: Այնուհետեւ, ան անդրադարձաւ տօնին պատմական հիմքերուն՝ Ս. Տրդատ թագաւորի հեթանոսական ու դաժան կեանքին, անոր դիմաց, Ս. Աշխէն թագուհիին ամուր հաւատքին ու ընտանեկան պատիւն ու միութիւնը պահպանելու օրինակելի վարքին, ապա նաեւ՝ թագաւորին քրիստոնէութեան դարձին, Հայաստանին ու Հայ ժողովուրդին թագաւորական ընտանիքին մատուցած ծառայութիւններուն ու

բարեսիրութեանց: Սրբազանը կոչ ուղղեց ներկաներուն, ըսելով. «Ս. Աշխէն թագուհիին հաւատքին նման ամուր պահենք հայ ընտանեկան օճախը»: Ան իր քարոզը աւարտեց մեր հաւատքի հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի աղօթքով:

Ապա Սրբազան Յայրը յայտարարեց, թէ մատրանս բարերարուհին՝ Տիկին Աշխէն Փիլաւճեան, որուն անուանակոչութեան տօնն է միաժամանակ, տօնական այս առիթով, Ազգային Առաջնորդարանիս կը կատարէ 15,000 տոլարի նոր նուիրատուութիւն մը:

Արարողութեան աւարտին, ներկաները երգեցին «Կիլիկիա» եւ «Մեր Յայրենիք» մաղթերգները, որուն յաջորդեց կոկիկ հիւրասիրութիւն մը:

NAME DAY OF THE PRELACY CHAPEL CELEBRATED WITH DIVINE LITURGY AND THE BLESSING OF MADAGH

- MRS. ASHKHEN PILAVJIAN MAKES A \$15,000 DONATION

On Saturday, July 11th, 2009, the Feast of St. Dertad and St. Ashkhen was celebrated at the Prelacy Chapel, which bears the name of the first Christian king and queen of Armenia.



H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy, delivered the sermon, and later conducted the blessing of *madagh*. Very Rev. Fr. Vaghinag Meloian and Very Rev. Fr. Barthev Gulumian assisted at the altar, while the “Lousavorich” youth choir participated in the singing.

Among those in attendance were clergy members, Central Executive Council member Mr. Khajag Dikijian, Executive Council members, Chapel benefactress Mrs. Ashkhen Pilavjian, sponsors, and nearly two hundred faithful.

Immediately preceding the Liturgy, the Prelate consecrated the new stained glass which adorns the main door of the Chapel and which was recently installed in memory of Mrs. Zabel Basmajian. Members of the late Mrs. Zabel Basmajian’s family were

present for the ceremony.

Following Divine Liturgy the Prelate and clergy members headed to the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall where the blessing of *madagh* took place.

In his sermon the Prelate reflected on the historical origins of the feast, the paganism of King Dertad, which was in stark contrast to the staunch faith and strong family values of Queen Ashkhen, and the subsequent conversion of

King Dertad to Christianity. The Prelate called on the faithful to keep their faith and family ties strong in the example of St. Ashkhen and concluded his sermon with a prayer by St. Gregory the Illuminator.

The Prelate then announced that on this joyous occasion Mrs. Ashkhen Pilavjian had made a new donation of \$15,000.

The evening came to a close with the singing of the Cilician and National anthems. A reception followed.
